ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1959 Общественные науки

Ա. Վ. Սահակյան

# ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՐԳԻՉԸ

Չիվանին և նրա հիմնադրած նոր-ազգային դպրոցը իրենց գործունեության հենց սկզբից, սոցիալական կյանքի անտրդարության, դասակարգային անհավասարության և հզորներին խարազանման մոտիվների հետ միասին արտահայտեցին նաև սուլթանական դաժան բռնակալությունից և ցարական կամայականությունից ճնշված ժողովուրդների ազատագրության, աշխատավոր ժողովուրդների եղբայրության գաղափարները:

Որպես ժողովուրդների բարեկամության գաղափարի ջատագով, Չիվանին ընթացավ Սայաթ-Նովայի, Մաչատուր Արովյանի գծած դժվարին, բայց պատվավոր ճանապարհով:

Չիվանին իր նախորդներ Սայաթ-Նովայի, Արովյանի և Նալբանդյանի նման ուներ եղբայր ժողովուրդներին հասկանալու ընդունակ լայն ու պայծառ հոգի, զգայուն ու սիրող սիրտ:

Նրա համար մարդը մարդ է, ինչ ազգի ու դավանանքի ուզում է նա լինի:

Դեպի օտարն ու օտարինը ունեցած վերաբերմունքի հարցում Չիվանին, որպես ժողովրդական բանաստեղծ, կանգնած էր այդ հարցի ժողովրդական տեսակետի վրա: Նա հավասարապես ատել է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին թշնամիներին: Ծառացել է ամեն կարգի հարստահարիչների, ազգային ու սոցիալական ճնշման դեմ: Ստեղծագործելով մեր ժողովրդի ապրած ամենամռայլ ժամանակներում, նա կարողացավ իր քնարը հեռու պահել ազգային ատելությունն հրահրելու գայթակղությունից: Նրա հայրենասիրական երգերն ամբողջովին համակված են աշխատավորական աշխարհայացքով և լուսավորված ժողովուրդների եղբայրության ու համերաշխության գաղափարների պայծառ լույսով: Եթե որոշ դեպքերում նա թույլ է տվել կծու արտահայտություն, այն ոչ թե վերաբերում է աշխատավոր ժողովրդին, այլ հենց այդ ժողովրդի համար չարիք դարձած՝

Իսկ ու փաշա հին սատակ,
Արյունարբու գող ավազակ՝

տարրերին, որոնք ոչ պակաս պատասխան են իրենց ժողովրդի համար:

Մեր դեմոկրատ մտավորականների նման, Չիվանու մոտ էլ չկա օտարատյացության դգացում: Հայրենասեր և ժողովրդասեր բանաստեղծը նաև մեծ հումանիստ է, որի համար «ողջ ազգերն էլ մեկ թաղարի ձաղիկ էին» և «պիտանի մեկ մեկու համար» ու իրար բարեկամ: Մարդկային սերունդները «ճանապարհի քարավան են», որոնք սիրով ու համերաշխությամբ պիտի ապրեն «հյուրանոց» աշխարհում և խաղաղ, ընթանան միասին:

Չիվանու պատկերացմամբ մարդկությունը մի ամբողջական շղթա է.

իսկ ազգերը նրա ընդհանրական հյուսվածքի անբաժան օղակները, չի կարելի պատկերացնել շղթա՝ առանց օղակների, իսկ ինչի՞ պետք կլինի օղակը նույնանմաններից բաղկացող ամբողջական հյուսվածքից դուրս։

Ամեն արարածից բարձր, շքեղ են մարդիկ,
... Բազում օղակներից շինված միհատիկ շղթա են մարդիկ,
Բաժանվել չեն կարող երբեք, իրարու կապված են մարդիկ։

Բազում օղակներից բաղկացած շղթան ամուր է նրանով, որ զոդված է սիրո քուրայում և ոսկեջրված՝ այդ ամենահաղթ սիրով։

«Ջիվան, սերն է մարդկանց բերթը անառիկ,
Իրար կապող ոսկե շղթան գեղեցիկ»։

Երգչի հումանիզմի հիմնական առարկան կենդանի մարդն է՝ իր հուզաշխարհով ու շահագրգռություններով հանդերձ։ Նա պահանջում է...

«Մարդուն մարդ ճանաչիր թե հայ, թե օտար։
... Բոլոր մարդիկ սիրեն եղբոր պես իրար։
... Ապրեն բոլոր մարդիկ հանգիստ ապահով։
... Մարդը մարդուն համ ընկեր է, համ եղբայր»։

Եվ վերջապես՝

Մարդությանը վնաս բերող չարությունը խափանենք։

Այս սկզբունքով էլ նա իր մի շարք բանաստեղծությունների մեջ, որոնք ամբողջովին համակված են աշխատավորական հայացքով և մնայուն արժեք են ստացել, պատկերել է եղբայրության և մարդասիրության գաղափարները։ Այսանց պետք է փնտրել Ջիվանու երգերի համար հիմնական այս մարդասիրական տրամադրությունների, այդ երգերի հմայքի ու բոլորի համար հասկանալի լինելու բանալին։

Ջիվանին անդրկովկասյան ժողովուրդների ու ցեղերի մեջ անչափ հարգված է ու ընդունված։ Նա խիստ դատապարտում էր ժողովուրդներին իրար խառնող կոսմոպոլիտ, երկերեսանի ու անսկզբունք, ծախու մարդկանց, որոնք՝

Հայի մոտ հայ են, թուրքի մոտ թուրք,

ու «շապկի պես փոխում են հավատը շուտ-շուտ»։ Պատվի և ինքնասիրության զգացումից զուրկ նման մարդիկ չարիք են և՛ իրենց ազգի, և՛ մարդկության համար.

Նա չի սիրիլ ուրիշի, ով չի սիրել ինքն իրան։

հայտարարում է Ջիվանին։

«Ո՛չ այլ ազգին անարգե, ոչ քո ազգդ ուրացիր»

սովորեցնում է Ջիվանին։ Պետք է սիրել հայրենիքը, «մերձավորին», բայց ոչ երբեք օտարին վատություն անելու, նրան վնաս պատճառելու գնով՝ եթե իհարկե նա չի ճնշում քեզ, չի սպառնում քո գոյությանը։

Ես սիրում եմ մերձավորիս, բայց ատել չեմ օտարին,
Օտարն էլ ինձ նման մարդ է, ցանկանում եմ իր բարին,

Թե օտարը ինձ չճնշե, մեկ վնաս չպատճառե,
Զեմ կամենալ մինչև անգամ, ոտքը հանդիպե քարին։

Զիվանու իդեան է, որ «մերձավորի և օտարի» միջև ոչ միայն խտրություն չդրվի, այլ որ՝

. . . Ազգերը եղբայր լինեն մեկ-մեկու։

Ազգային պատկանելիությունը և կրոնական դավանանքը չպիտի խանգարեն միևնույն հողի վրա, կողք-կողքի դարերով ապրող ժողովուրդների համերաշխությանը։ Ինքնագատելով կրոնական դավանանքի նկատառումներով ազգերին իրար դեմ լարելու, նրանց մեջ թշնամություն սերմանելու քաղաքականությունը, նա ձգտում է, որ՝

. . . Մարդիկ քրիստոնյա թե մահմեդական,
Իրար հետ սիրով վարվեն մշտական։

Ջաղկելով կրոնական անհանդուրժողականությունը, երգիչը պահանջում է հարգել ուրիշի զգացմունքն ու դավանանքը։

. . . Ամեն մի ազգ ունի իրեն մի հավատ,
Չի կարելի երբեք մեկին ասել վատ։

Ազգային ատելություն ու կրոնական անհանդուրժողականություն սնող հողը նա համարում է աշխարհիկ և հոգևոր իշխողներին, որոնց այդ բանը հարկավոր էր հենց իրենց ճնշած ու հարստահարած աշխատավոր խավերի ուշադրությունը իրենցից հեռացնելու ու ազգամիջյան դավադրություններով զբաղեցնելու համար։

Երգիչը գոհ է, որ հակառակ իշխողների դավադրություններին, «ողջ Կովկասում, հայն ու թուրքը խաղաղ, սիրով են ապրումք։ Ժողովուրդների բարեկամ բանաստեղծը ցանկանում է, որ—

. . . Վնաս չհանդիպի ազգերի մեջ ոչ ոքին։

Ոչ թե ազգային խտրականություն ու թշնամանք, այլ համերաշխություն, փոխադարձ սեր և հավատ՝ իրար նկատմամբ։

«Իդեա» բանաստեղծության մեջ հեղինակը, որոշ չափով, անցնում է ազգային սահմանները և բարձրանում համամարդկային եղբայրության ու համերաշխության աստիճաններով։

Անհատի հասարակական օգտավետության չափանիշը չպետք է միայն իր ազգին, իր ժողովրդին պետք դալը, միայն նրանց նկատմամբ ունեցած պարտքը կատարելը լինի։ Այն անհատի արարքն է գովելի, որը խտրություն չի դնում իր և օտար ժողովուրդների շահերի մեջ, այլ որ կարողանում է հավասարապես պետք գալ լուսավորություն տարածելու ասպարեզում՝

. . . Օգուտ տալ թե օտարաց, թե հայոց,
Ամեն մեկ գյուղի մեջ բանալով դպրոց։

Այդ գործին, առանց օտարի և յուրայինի մեջ խտրություն դնելու, պետք է ծառայեն կրթված ու լուսավորված բոլոր ազնիվ մարդիկ։ Երգիչը մարդասիրության մասին իր անկեղծ հայացքը արտահայտել է հետևյալ տողերում.

Անխտիր, ողջ մարդկանց ցանկալի բարիք,
Ոչ մի անհատ ինձնից չտեսներ չարիք,
. . . Սկսեի մեծ օգուտ տալ մարդկությանն,
Ընկածին, տկարին լինեի պաշտպան։

Նրա ցանկությունն է, որ մարդասիրական այդպիսի բարձր ու վսեմ գաղափարներով դաստիարակված մարդիկ, իրենց խոսքն ու գործը, իմացությունն ու ջանքերը ի սպաս դնեն ընդհանուր մարդկության բարօրության և բարեկամության շահերին։ Նրանց դաստիարակած սերունդները հեղինակի խոսքով ասած «մեկ-մեկ ջահ դառնան» ազգամիջյան առեղության ու թշնամանքի խավարը փարատելու, ժողովուրդներին իրար մոտեցնելու և օգնելու, նրանց միջև փոխադարձ վստահության միջավայր ստեղծելու կարևոր գործին։

Բոլոր մարդիկ սիրեն եղբոր պես իրար,
Մեծը փոքրին շահի, անկեղծ, հայրաբար։
. . . Ջիվանի, ոչ մի տեղ չլինի կռիվ,
Ուղիղ սրտով պահեն մեկ մեկու պատիվ։

Ժողովուրդների «խաղաղ և երջանիկ» վիճակով ապրելու գաղափարի ջատագով երգիչը թշնամի է ազգամիջյան բոլոր տեսակի ընդհարումներին։ Նա քննում է պատերազմների պատճառները և դալիս այն եզրակացության, որ իրար դեմ դուրս գալու և իրար ոչնչացնելու գործում իրենք ժողովուրդները չեն մեղավոր, այլ տիրապետող և շահագործող դասերը -«աշխարհի հզորները», որոնք անկախ ազգային պատկանելությունից, իրենց տիրապետության շահերի ու փառասիրությունների համար աշխարհը սպանդի են վերածում։

Աշխատավորը, «երկիրը վարող ցանող և արյուն քրտինք թափող» մարդը չի կարող ավերի ու ավարի կողմնակից լինել։ Նրան այդ բանին հարկադրում են ու չարիքի գործիք դարձնում սեփական ազգի իշխողները, «խոովահույզ պալատները», ուրիշի արյուն քրանքի հաշվին հարստություն ու դիրք ձեռք բերելու սիրահարները, որոնք բարիքներ չստեղծելով, այն խլում են ստեղծողներից, գերում ուրիշ ժողովուրդներին և կողոպտում նրանց ունեցվածքը։ Աշխատավոր խավերը աշխարհաշեն են և խաղաղասեր։ Նրանք են բոլոր բարիքների ստեղծողը, կոտորածների ու հրդեհումների թշնամին։

Ժողովուրդն է թե գյուղ, թե քաղաք շինող,
Նա է անշունչ առարկային կյանք տվող։

«Պատերազմ» բանաստեղծության մեջ Ջիվանին անարդանքի գատավճիռ է կարդում նրանց, որոնք պատերազմի են դիմում նոր երկրներ ու ժողովուրդներ սարկացնելու, նոր հողեր ու շուկաներ գրավելու համար։

Դրանք աշխարհը ներկում են աշխատավոր ժողովրդի արյունով, բազմահազար օջախների կրակը մարում, որդին՝ ծնողներից, եղբայրը՝ եղբորից բաժանում, կինը՝ այրի, երեխաները՝ որբ թողնում։

. . . Տանն են մնում աղջիկները,
Բազմանում որբ մանկիկները,
Երկու կողմի ծպիկները,
Ջուր կոտորում են իրար։

Այս բանաստեղծությունը ցասումնալից բողոք է աշխարհավեր պատերազմների ու այն հրահրողների դեմ և այսօր էլ իր այժմեականությունը չի կորցրել։ Այս և նման մի շարք բանաստեղծություններում հեղինակը խորամուխ լինելով աշխարհավեր պատերազմների պատճառների մեջ՝ գալիս է այն եզրակացության, որ հեռու չէ այն օրը, երբ՝

Կերթան այս օրերը, էլ ետ չեն դառնա...

Եվ այն ժամանակ՝

Կկանգնեն ազգերը ուժեղ կովարար,
Կապրեն սիրով խաղաղ, չեն ջարդի իրար։

Երգիչը փափագում է աշխատանքի թագավորությունը, երբ «ոչ տեր լինի և ոչ ծառա աշխարհում», ոչ կռիվ, ոչ արյուն ու արտասուք։ Կիսոխվի աշխարհը, չարիքը կանհետանա, կվերանա բռնությունը և՝

... Զուր տեղը արյուն թափելը, կռիվը կվերջանա.
Ամեն մարդը անկարոտ յուր պարենը կուտենա,
Կդառնա բնության հետ համակարծիք աշխարհը։

Աշխատանքի տիրապետության հաստատմամբ աշխարհում կստեղծվի մի հարմոնիկ կարգ, որի մեջ «բոլոր մարդիկ կընթանան մեկ ուղիղ ճանապարհով» սիրով ու ձեռք ձեռքի տված՝ առանց ատելության ու թշնամանքի որևէ զգացման։

* * *

Միապետությունը հետզհետե ավելի խստացրեց իր սև հարյուրակային խավարամոլ հարձակողական քաղաքականությունը «ժողովուրդների բանտում» տառապող ազգերի դեմ։ Նա ամեն կերպ խանգարում էր նրանց համերաշխությանը՝ իրար դեմ լարելով և ազգային ատելության հուրը բորբոքելով. արգելակում էր նրանց ազգային կուլտուրական զարգացմանը, նրանց խաղաղ համակեցությանը։

Ժողովուրդներին իրար դեմ հանելու և ազգամիջյան ջարդեր կազմակերպելու արյունոտ քաղաքականության արդյունք էին 1903 և 1905 թվականների կոտորածները, որոնց կազմակերպիչների ու խրախուսողների նպատակն էր երկու եղբայրական ժողովուրդներին՝ թուրքին ու հային գժտեցնելու և մասամբ վրացիներին այդ բանում խառնելու ճանապարհով պառակտել նրանց ուժերը և շեղել նրանց ուշադրությունը ռուսական 1905 թվականի հեղափոխությունից։

Չիվանին ժամանակին հասկացավ ցարիզմի «բաժանիր որ տիրես» մարդասպան քաղաքականության ահավոր հետևանքները։ Զգաց ու տեսավ, որ արհեստականորեն բորբոքած ազգամիջյան խժդժությունները, դարեր շարունակ կողք կողքի սիրով ապրող դրացի ժողովուրդներին իրար կատաղի թշնամի են դարձնում ու միմյանց սրատել տալիս։ Նա իր զգաստացնող երգով ու խոսքով զգուշացնում էր հարևան ժողովուրդներին նրանց սպառնացող աղեսից.

Դրացի, թե իրար չոգնենք,
Մենք էլ ոչինչ, դուք էլ ոչինչ.
Եթե չհաշտվենք, կռվենք,
Մենք էլ ոչինչ, դուք էլ ոչինչ։

Ջիվանին զգուշացնում էր, որ դարավոր բարեկամների հարաբերությունների մեջ սեպ խրող ու իրար կոտորել տվողի նպատակը նրանցից որևէ մեկին օգնելն ու պաշտպանելը չէ, այլ նրանց ուժասպառ դարձնելով բռնկած հեղափոխության հրդեհը մարելը, որպեսզի կարողանա հեշտ կեղեքել և սարկացնել: Սա ենթադրաբար իշխողի քաղաքականությունն է, որի դեմ ցարական բանտում տանջվող ժողովուրդները պետք է «ձեռք-ձեռքի տված» հանդես գան, որովհետև այդ է պահանջում նույն երկրի ծնունդ, հարևան ազգերի համերաշխության շահերը.

. . . Ձեռք-ձեռքի տանք, հարգենք մեր երկրի շահը,
Եվ ինքներս առիթ չտանք, նոր գալիք ջոկ վնասին,
Սիրենք անկեղծ սիրով, միայն թե խելք ունենանք,
Մեր հոգսերը, մեր ցավերը ինքն իրեն կպակասեն:

Մեծ հույսդրսևորելով հայերի և վրացիների ամրակուռ եղբայրության հետ, երգիչը մերկացնում է պրովոկատորների դիվային մեքենայությունները.—

Ցանցեր պատրաստելու դերձան ես մանել,
Թռչունի պես կուզես մեզ բնից հանել,
Դու մեր մեջը տանելություն մի ցանիլ
Մենք վաղուց եղբայր ենք հայ ու վրացի:

Հարկավոր է միահեծանության ենթադրամիտ պրովոկացիային հակադրել փոխըմբռնման ու անկեղծ բարեկամության այն փորձված գործելակերպը, որ դարեր շարունակ իրար նկատմամբ բանեցրել են եղբայրական ժողովուրդները: Պետք է կարողանալ իրենց համերաշխությանը սպառնացող ահավոր արենահեղ վտանգի մասին հասկացնել և կանխել այն, այլապես եղբայրասպանությունը անխուսափելի կդառնա:

Ապրում ենք մեկ-մեկուց խռով,
Ծներս մոտ, իրարու քով,
Եթե խելքի չգանք շուտով,
Մենք էլ ոչինչ, դուք էլ ոչինչ:

Նույն միտքն է արտահայտում «Բաքու» երգում:

Եթե չհաշտվեն երկուսն էլ կընկնեն,
Գետին կտապալվեն թուրքը և հայը:

Նախազգուշացնում է երգիչը:

Հակառակ բարեկամության երգչի ցանկության ու ծայրահեղ ջանքերի, միահեծանության սատրապներին հաջողվեց սղոցել սիրո և համերաշխության պատվանդանի վրա խարսխված դարերի պատմություն ունեցող եղբայր ժողովրդների անաղարտ բարեկամության «կամարակապ սյունը» և արյունով ներկել նրանց:

Տիրող ամոթալի քաղաքականությանը սկզբում դոհ դարձան Անդրկովկասի այլադավանները՝ հատկապես հայերն ու ադրբեջանցիները: Դավադրության հեղինակներին հաջողվեց այդ գործում քաշել և դավանակից վրացիներին: Հատկապես Բաքուն, Շուշին, Գանձակը, Նախիջևանը, Թիֆլիսը ու Երևանը վերածվեցին ուղղաճակատների, որտեղ կռվում էին թաղը—թաղի, փողոցը—

փողոցի, նույնիսկ տունը—տան և հարևանը—հարևանի դեմ, պարզ է իհարկե, բնավ ոչ համակեցության պայմանների հարկադրանքով և ներքին կամ արտաքին այլ պատճառների պահանջով։

Չիվանին բացեի բաց և երբեմն էլ եզովպոսյան լեզվով այդ կոտորածները համարում էր ժողովուրդների թշնամի ցարիզմի գործը և իր բանաստեղծությունների մեջ խիստ դատապարտում այդ մարդասպան քաղաքականության «հերոսներին», նրանց անվանելով «չար ատելության որոմ ցանող» և իրար կոտորել տվող «սատանայի շորեր հագած թշնամի», որի դավադրական արարքի հետևանքով երեկվա բարեկամ ժողովուրդները՝

Դարձել են խելագար, արյան սիրահար,
Կոտորում են իրար թուրքը և հայը։

Հետևանքը երկու կողմերի համար էլ հավասարապես ծանր էր ու կորուստը՝ մեծ։

Սպանդանոց էր դառել Բաքվի հրապարակը,
Իրար մոտ ընկած էին հայի, թուրքի դիակը։

Պակաս սարսափելի չէր «երջանիկ» Թիֆլիսի դրությունը։ Այն Թիֆլիսի, որը մի ժամանակ եղել է, ինչպես սրամիտ նկատել է մեր ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը «...մի հարսանքատուն, ուր հրավիրված էին Գովկասի բոլոր ազգերն ու ցեղերը քեֆ քաշելու», իսկ ազգամիջյան թշնամանքը ցարիզմի կողմից բարեկամ ժողովուրդների վրին փաթաթվելուց հետո փոխվել՝

Երջանիկ Թիֆլիսը դրախտի նման,
Դարձել է մարդակեր, դժոխք իսկական,
Որ կողմը կդառնաս թախիծ նեղություն,
Ջրի պես հոսուն է մարդկային արյուն։

Բայց դարավոր բարեկամությամբ ապրող ժողովուրդների համար Բաքուն «սպանդանոց» և Թիֆլիսը՝ «դժոխք» դարձնող «սատանի շորեր հագած թշնամին»՝ նա ով վառել էր ժողովուրդների մեջ կույր ֆանատիզմի կրակը և կազմակերպել կոտորածները և «...Ով կարող եր մարել, չէր մարում այդ կրակը», «ձեռքերը արյունլվա» հեռու կանգնած դիտում էր զարհուրելի արնահեղության քստմնելի տեսարանը՝ «չշարժելով մահակը»։

Ժամանակակիցների հավաստի վկայությամբ, ցարիզմը ինքն էր գինում և իրար դեմ հանում ազգերն ու կոտորել տալիս իրար։

«Ցարիզմը ինքը իր զորքերը չէր ուղարկում հայերի դեմ,— 1905 թվականի անցքերի առթիվ գրում է Լենին, —այլ գինում էր ու նրա դեմ հանում թուրքերին (ապրբեջանականներին—Ա. Ս.)։

Իսկ դրայի ժողովուրդներին օգնելու և բնաջնջող իրադրությունից ազատելու համար արված դիմումին Անդրկովկասի սատրապները իրենց անզորության պատրվակով մերժում էին։

«Շրջելով Բաքվի պատերազմական դաշտ դարձած փողոցներում, Նակաշիձեն տեսնում էր դիակներ, այրվող տներ, խայանված գույքի կույտեր և բարեհոգ ժպիտով հայտարարում էր, թե զորք չունի, զորություն չունի, թող կռվողները իրենք իրար հետ հաշտվեն... Եվ հրացանով զինված ոուս զինվորի

առջև մորթվում էին խաղաղ ու անզեն քաղաքացիներ — իսկ կազմակերպող նայում էր միայն»։

Երգիչը ափսոսանքով է ընդգծում, որ «մի երկրի զավակ» ադրբեջանցիներին ու հայերին «վատ գործի դեկավար չար ոգին» (միապետությունը) իրար դեմ գրգռելով կոտորել տվեց, իսկ ինքը տեսնելով իր չարագործության պտուղները, ուրախացավ—

. . . Ծափ տվեց առանձին, հրճվեց սրտագին։

Նա խորապես ցավում էր, որ չարաչար խափվելով «անվայել գործ տեսան հին հարևանները»։ Նրան վիշտ էր պատճառել միապետության բորբոքած մոլեգնող հուրը, որի մեջ այրվում էին ժողովուրդներին միացնող վստահության կապերը։ Մորմոքվող սրտով հիշեցնում ևր հայերի և ադրբեջանցիների առաջվա բարի դրացիական հարաբերությունների մասին, երբ նրանք ապրում էին սիրով և համերաշխ։ Եվ ո՞ւմ մտքով կանցներ ուրիշ, գոյություն ունեցածին հակառակ, վարվելաձև, որ ստեղծեց պայծառ հարաբերությունները չհանդուրժող չար «դեր»։

Հայի մտքից չեր անցնում բնավ, երբեք, հավիտյան,
Թե թուրքին մի վնաս տա, կամ վիրավորի նրան,
Թուրքը էլ հայի հետ սիրով, հաշտ էր ապրում մշտական։

Մեծ էին երգչի հավատն ու հույսերը՝ ժամանակավորապես խաբված ազգերի մեջ խորտակված վստահության ու համերաշխության վերահաստատման և իրար հաշտության ձեռք մեկնելու գործում։

Ինչու համար մեկը մեկին վնաս տան,
Մարդը մարդու համ ընկեր է համ եղբայր։

Նրա երգը այն հավատն էր ներշնչում բոլորին, թե շուտով կցրվեն դրացի ժողովուրդների բարեկամության երկնակամարը անփարատ խավարով պատող չարագուշակ ամպերը տեղի տալով եղբայրության արշալույսի հաղթական ճառագայթներին։ Ուր որ է խաղաղության երփներանգ աղեղնակի պայծառության մեջ կերևա թեաձող սպիտակ աղավնին՝ կանաչ ոստը կտուցին.

Սիրո խաղաղության համար կապած աղեղնակը տեսնենք,
Նոյին կանաչ տերև բերող, թռոցած աղավնյակը տեսնենք։

Ջիվանին մարդասիրությունը և ժողովուրդների բարեկամությունը ընդունում էր, որպես կյանքի հարատև հաստատուն գործոն և նրա պահպանության համար մղվող պայքարը՝ սերունդների սրբազան պարտականություն։ Կողքկողքի խաղաղ համակեցության հաղարամյակների պատմությունը, որը գալիս է ժողովուրդների սկզբնավորության ժամանակներից և դեռ պիտի ընթանա գալիքի ճանապարհներով, կարևոր է ու թանկ, ոչ միայն այսօրվա, այլև վաղվա գալիքի համար։ Ուստի ոչ միայն ժամանակակիցները, այլև ապագա սերունդները կհասկանան և ըստ արժանվույն կգնահատեն իրենց նախնիքների ազգամիջյան համերաշխության ազնիվ ջանքերի պտուղն ու կփառաբանեն նրանց.

. . . Ապագա սերունդների մոտ կարելի է գնահատվենք։

Լուսամիտ Չիվանին հավատում էր ժողովուրդների ուժին, խաղաղության ու եղբայրության գաղափարների նրանց նվիրվածությանը, արդարության և մարդասիրության հաղթանակին։ Նա երազում էր այն ըղձալի օրը, երբ շահագործող և շահագործվողներ չեն լինի աշխարհում, երբ բոնությունը, արյուն թափելը իսպառ կվերանան և երբ բոլոր մարդիկ առանց ազգի ու դավանանքի խտրության, եղբոր պես կվարվեն իրար հետ և օգտավետ կլինի մեկը-մյուսի համար։ Այդպես երկար պիտի.—

Ապրեն բոլոր մարդիկ հանդիստ, ապահով,
Հարգեն, սիրեն իրար, ուզիղ, ջերմ սիրով։

Անսահման մեծ էր երգչի ծառայությունը Անդրկովկասում 1903 և 1905 թվականներին բռնկված ազգամիջյան հրդեհը հանգցնելու և բարեկամություն քարոզելու գործում։

Չիվանին խաղաղությունն ու համերաշխությունը պաշտպանում էր նաև իր պրակտիկ գործունեությամբ։ Ռուս նշանավոր գրականագետ Ս. Դորոգեցկին Չիվանու մահվան 10-ամյակին նվիրած իր հոդվածում գրում է. 1906 թվականի ջարդերի ժամանակ, նստած սուրբ Գևորգի մոտի սրճարանում, որին արդեն մոտենում էին ջարդարարները, նրան ասում են. «Չիվանի ինչ ես նստել, արդեն այստեղ են գալիս ջարդարարները». նա առանց տեղից շարժվելու պատասխանում է. «Ինձ ինչ պիտի լինի որ, չէ որ բոլորը գիտեն, որ ես երգում եմ բոլորի համար, որ ես բոլոր ժողովուրդների բարեկամն եմ»։ Նա երգում էր «Ալլըն վեր ալմա»[1] եղբայրության երգը։ Եվ իրոք այդպիսին էր նա»։

Այն ժամանակ երբ ցարական պրովոկացիայի ազդեցության ենթարկվածները ջուր էին լցնում միապետության ջրաղացին. Չիվանին անվախ ու համարձակ հանդես եկավ Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության կողմնակցի իր շիտակ խոսքով, և դատապարտեց ցարական միապետությանը և կոչ արեց սթափվել, դպաստանալ ու դադարեցնել անմիտ արյունահեղությունը, վերջ դնել փոխադարձ թշնամությանը։

«Հայ լեզվի տարածման եռանդուն ջատագով լինելով ու հայ շրջաններից թուրքերենի ազդեցության վերացմանը ծառայելով հանդերձ, Չիվանին չի խորշում թուրք ժողովրդից, ընդհակառակը նա ունի մի շարք (քառասունից ավելի) ադրբեջաներեն և թուրքերեն երգեր, որոնք սերտ համերաշխություն են քարոզում։ Վերջին հայ-թուրքական դեպքերից շատ առաջ նա ուներ մի տարածված երգ «Ալլըն վեր ալմա համշարի իսլամ», իսկ դեպքերից հետո գրածները այժմ երգում են թուրք (ադրբեջանական - Ա. Ս.) շրջաններում»,— Վկայում է Ռ. Լեոնյանը։

Անդրադառնալով ժողովուրդների միջև խաղաղություն և բարեկամություն վերականգնելու գործում Չիվանու խոշոր ջանքերին, Ս. Դարագեցկին գրում է. «... Այսպես իր ջութակով,— ինչպես Որբևոսը դժոխքում.— անցնում էր նա, երբ որ թշնամանքն ու ատելությունը իրենց գործն էին տեսնում։ Այսպես էլ մարդկանց միջև սեր և միարանություն հնչեցնող իր ջութակով հավետ կենդանի կմնա նա սերունդների հիշողության մեջ»։

---

[1] Ձեռք տանք իրար։

* * *

Հումանիստ երգիչը կրոնադավանաբանական հարցերում իր ժամանակի շատ մտածողներից բարձր էր կանգնած։ Այդ մոտիվներով գրված որոշ բանաստեղծությունների մեջ ոչինչ չկա կրոնի և դավանանքի բացառիկությամբ պայմանավորված, ընդհակառակը, հեղինակի ցանկությունն է, որ լայնարձակ աշխարհի վրա ամեն ազգ ու ժողովուրդ սիրի իր լեզուն, կամավոր դավանի իր կրոնը, որովհետև՝

Ջսիրողը իր լեզուն, իր կրոնը սնիական,
Նա չի սիրել ուրիշին, ով չի սիրել ինքն իրան։

Բանաստեղծը ծառանում է մեր ժողովրդին բռնի և խաբեությամբ դավանափոխության և ասիմիլյացիայի հարկադրողների դեմ՝ դրա մեջ տեսնելով ժողովրդի գոյությանը, նրա լեզվի, ազգային կուլտուրայի և ինքնության պահպանությանը սպառնացող լուրջ վտանգ։ Դա բռնի մահմեդականացումն էր, սակայն նրանից պակաս ահավոր չէր նաև այն ժամանակ կաթոլիկ միսյոներների՝ հայ ժողովրդի այդ նենգ «բարեկամների» ազգադավ գործունեությունը։

Նշավակելով ազգությունից ու հայությունից խորթացած դավաճաններին, Չիվանին ցավով ընդգծում էր, որ այդ հողի վրա առաջացած ներքին պալքարը ավելի խորն է թափանցում ժողովրդի մեջ և խորտակում նրա միասնության ոգին։ Բայց երբ փաստ դարձավ աղանդավորության գիրկն ընկածների գոյությունը, Չիվանին չվարանեց համերաշխության ձեռք մեկնելու այդպիսիներին։

Կրոնական մոլեռանդ վեճերի այդ թեժ օրերին երգիչը հանդիմանելով իր դավանակից լուսավորչականներին, խորհուրդ էր տալիս վերջ տալ ժողովրդի մեջ խարությունը և անմիաբանությունը խորացնող այդ անմիտ կռիվը։

Ազգով հայ կաթոլիկ բողոքականին,
Լուսավորչյաններու ատելն իզուր է...

Հակառակ մեծամասնության մեջ իշխող մտայնությանը այսպիսի առաջադիմական կոչ է անում հեղինակը։

Նա համոզված էր, որ ուսման և գիտության ծավալման շնորհիվ պառակտվածությունը կվերանա ժողովրդի միջից և դարդացած նոր սերունդները իրենց ուժերը չեն սպառի դավանաբանական անիմաստ վեճերի վրա։

Չիվանին կարողացավ ճիշտ գնահատել ռուսական առաջին հեղափոխության փրկարար դերը ճնշված ազգերի ու աշխատավոր մարդկության ազատագրության համար և ջերմորեն ողջունեց նրան։ Նա, առանց ազգի ու դավանանքի խտրության, կովկասյան ժողովուրդներին կոչ արեց համատեղ ունկնդրելու հյուսիսից հնչող --քաջալեր նվագի ավետյաց ձայնը և նորոգվելու նրանով.

Օգտավետ ու դուրեկան էր նոր նվագը Կովկասին,
Արեք, եղբայր կովկասցիներ, գնանք մեկ տեղ լսելու,
Այդ վերանորոգիչ ձայնով, մենք նորոգվենք միասին։

Եվ այսպես էլ նա մինչև վերջը մնաց այն տեսակետին, որ հեղափոխություն կատարող ժողովուրդները կկարողանան վերջ դնել քաղաքական, ազ-

դային-սոցիալական անարդարությանը, անիրավությանը և անհավասարությանը ստեղծելով շահագործումից ու ազգային խտրականությունից զերծ աշխատանքի տիրապետություն։

Սովետական կարգերը մեր հայրենիքի եղբայրական բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև հայ ժողովրդի համար բերեցին իսկական ազատություն։

Իրականացավ երգչի դուշակությունը, թե՝

. . . Փուշը մենք կքաղենք, որդիքս վարդը,
Նրանք պետք է տեսնեն անուշիկ օրեր։